

## **Spanglish-ի ուսումնասիրությունը որպես երկրագիտական բառապաշարի յուրացման միջոց**

*Բաբայան Ք.Ա.*

*Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարան, Երևանի մասնաճյուղ  
(Հայաստան, Երևան)  
babayan.christine@mail.ru*

**Վճռորոշ բառեր՝** երկրագիտություն, բառապաշար, լեզվամշակույթ, ուսուցում, ազդեցություն, ընդմիջարկում, փոխազդեցություն, իսպանական փոխառություններ, հաղորդակցական ռազմավարություն, երկրագիտական դասընթաց

### ***Изучение Spanglish как средство освоения страноведческой лексики***

*Бабаян К.А.*

*Российский государственный университет туризма и сервиса, Ереванский филиал (Армения, Ереван)  
babayan.christine@mail.ru*

**Резюме:** Процессы взаимовлияния языковых структур имеют значительное влияние на них. Изучение особенностей испанского языка, которым пользуются в Америке, позволяет выявить фонетические, словарные, синтаксические особенности Спенглиша, и использовать их в обучающих целях.

Спенглиш имеет огромный обучающий потенциал, так как он демонстрирует группы определенных людей, их психологию, поведение, нравы и так далее. Его исследование предоставляет возможность получить правильную и целостную информацию, как на уровне культуры, так и на уровне языка.

Продуктивным является использование разных взаимодействующих методов на практических занятиях английского и испанского языка, симулирование разных реальных речевых ситуаций, иногда создание английских слов, заменяющих испанские слова, которые раскрывают особенности лексики Спенглиша.

В контексте данного изучения значимым является культурологический аспект обучения заимствованных, взаимосвязанных слов.

**Ключевые слова:** особенности Спенглиша, потенциал, исследование, изучения, лексика, заимствование, взаимосвязанные слова, влияние, культурологический аспект.

### ***Studying of Spanglish as tool for assimilation of Spanish area vocabulary***

*Babayan K.A.*

*Russian State University of Tourism and Service, Yerevan Branch (Armenia, Yerevan)  
babayan.christine@mail.ru*

**Abstract:** Interaction processes of language structures have significant influence on them. Analysis of regional particularities of American Spanish affords the opportunity to disclose phonetic, lexicological and syntactical specifics and use them for educational purposes.

Spanglish has huge educational potential as it demonstrates groups of concrete people, their psychology, behavior, moral and etc. It's studying offers a chance to have reliable and complete information both in cultural and language levels.

It is productive to use different interacting methods at Spanish and English practical lessons, to simulate different real speech situations, sometimes to create English words replacing Spanish ones which unfold particular qualities of Spanglish vocabulary.

In the contest of present study culturological aspect of teaching borrowed, interrelated words is essential.

**Keywords:** spanglish vocabulary, study, borrowed and interrelated words, methods, influence, to simulate, opportunity, educational purposes, language structures.

Իսպաներեն երկրագիտական բառապաշարի ուսուցման գործընթացում անհրաժեշտ է ընդհանուր տեղեկություններ ձեռք բերել այսպես կոչված «սպենգլիշ» և «ինգլիշուլ» հասկացությունների մասին, քանի որ իսպաներե-

նի և անգլերենի փոխազդեցության, փոխմերձեցման, պատմամշակութային տարբեր բնույթի փոխհարաբերությունների արդյունքում ձևավորվել են հաղորդակցման խառը, համակցված լեզվաարտահայտչամիջոցներ,

որոնք հանդես են գալիս որպես յուրահատուկ լեզվամշակութային իրողություններ: Դրանց ուսումնասիրությունն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն, հատկապես երբ խոսք է գնում իսպանների երկրագիտական բառապաշարի ուսուցման մասին:

Երկլեզվության ձևավորման գործընթացն ի հայտ է գալիս անգլերեն և իսպաներեն լեզուների զարգացման պատմության մեջ դրանց ձևավորման տարբեր փուլերում: Գրավյալ տարածքների, տարածաշրջանների բնակիչների լեզուները շոշափելի ազդեցություն են ունեցել թե՛ անգլերենի, թե՛ իսպաներենի զարգացման վրա: Դրա արդյունքում առաջանում են այսպես կոչված «պիջին», «կրեոլ» լեզուներ, որոնք առաջացել են տեղի բնակչության կողմից լեզուների զանգվածային, բայց ոչ լրիվ յուրացման արդյունքում (Потемня 1999, Baugh and Cable 2001, Bookless 1966, Friedman 2001, Johnson 1999):

Spanglish-ի մասին ընդհանուր տեղեկությունները և կոնկրետ օրինակների քննարկումն օգնում է ուսանողներին հստակորեն պատկերացնել, թե ինչ է տեղի ունենում իսպանալեզու երկրներում և տարբեր իսպանական գաղթօջախներում, դասերը դարձնում է ավելի հետաքրքիր և մոտիվացված:

Սպենգլիշով հաղորդակցվում են Մեքսիկայում և ԱՄՆ-ում: Հիմնականում իսպանալեզու երկլեզու անձինք իրենց խոսքում հաճախակի են օգտագործում սպենգլիշ բառապաշար: Օրինակ՝

I am sorry I canot attend next week's meeting **porqueten gouna obligacion de negocios** in Boston, **peroespero que** I will be back for the metting the week after (Spanish translation: because I have business obligation in Boston? But I hope that»).

Անկախ այն բանից, թե ինչպես են վերաբերվում սպենգլիշին, այն ներկայացնում է որոշակի մարդկանց խմբեր, նրանց հոգեբանությունը, վարքը, բարքերը և նրանք իսպանալեզու են: Նրանց մասին անհրաժեշտ է ստանալ ճիշտ և ամբողջական տեղեկատվություն թե՛ մշակույթի, թե՛ լեզվի մակարդակներում:

Սպենգլիշ ուսումնասիրելու նպատակով կարելի է կազմակերպել սեմինար պարապմունքներ կամ նախագծային աշխատանքներ: Օրինակ՝ Ալեքս Ջոնսոնն իր “That curious

mixture of English and Spanish is here to stay” առանձնացնում է սպենգլիշի չորս տեսակ (Johnson 1999: 1-2):

Սպենգլիշն այսպես կոչված ընդմիջարկման դրսևորում է: Այն ներկայացնում է անցում մի լեզվական համակարգից մյուսը նորմալ խոսակցության ժամանակ: Ընդմիջարկումը սովորաբար ի հայտ է գալիս երկլեզվության դեպքում, և երբ դա տեղի է ունենում, երբեմն ուղղեկցվում է հումորի զգացումով: Բայց երբեմն խոսողն ընդունակ չէ իր մտքերն արտահայտել մեկ լեզվով և անցում է կատարում այլ լեզվի՝ լրացնելու առաջացած դժվարությունը: Օրինակ՝

“You’ve got a nasty **mancha** on your **camiseta**”  
“**Voy a vacumear la carpeta**” (Friedman 2001):

Իսպաներեն ուսումնասիրող ուսանողների համար հարուստ երկրագիտական նյութ է պարունակում հետևյալ տեքստը, որը վերաբերում է սպենգլիշին, նրա ձևավորման պատմությանը, ընդմիջարկման դրսևորումներին, նրա գործածման տարածաշրջաններին, և որպես այլընտրանքային հաղորդակցական ռազմավարություն կիրառելու առանձնահատկություններին:

Օրինակ՝

According to Marika Koivisto in her paper “Spanglish: The History and Language of Spanish-Speaking People in the USA.”, in normal conversation between two bilinguals, code-switching consists of 84% single word switches, 10% phrase switches and 6% clause switches”. (Department of Translation Studies, University of Tampere, 1998) Young bilingual children are adept at switching from one language to another as the conversational situation demands. In one study of bilingual Hispanic children in Miami, Florida, the children had access to a non-overlapping vocabulary in Spanish and English. In this instance, knowing the two languages actually expanded their access to concepts in comparison to children who spoke English or Spanish only (Johnson 1999: 1-2):

Երկրագիտական տարբեր թեմաներ ընտրելիս, կարելի է ուսանողներին առաջարկել այնպիսի տեքստեր, որոնք վերցրած են երկլեզու մարդկանց առօրյա կյանքից: Համապատասխան վերլուծությունն օգնում է ուսանողներին բացահայտել իսպաներենի առանձնահատկությունները՝ հատկապես միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից: Ինչպես նշում են սպենգլիշի առանձնահատկություններով զբաղվող լեզվաբանները,

նույն անգլերեն հատկաբանությունը իսպաներենում այլ իմաստներ է ձեռք բերում և հակառակը.

*Technology Spanglish Words*

**1. Linkear** To link (as in hyperlinks).

իսպաներեն համարժեքն է *hacer un enlace* - » *կայ հաստատել*

**2. Updatearor opdeitear-** To update

իսպաներեն համարժեքն է *actualizar-արդիականացնել, թարմացնել*

**3. Releasear** –To release (used in techie language, as in, to release a new version of something)

իսպաներեն համարժեքն է *lanzar, publicar, divulgar-*», », »

**4. Levelear-** To level up (gaming language)

իսպաներեն համարժեքն է *nivelar- հավասարեցնել*

**5. Googlearor gugulear-** to Google

իսպաներեն համարժեքն է *buscaren Google- փնտրել Google-ում*

**6. Clickear** To click

իսպաներեն համարժեքն է *hacer clic, pinchar, apretar- մկնիկը սեղմել, սեղմել*

**7. El mouse** computer mouse

իսպաներեն համարժեքն է *el raton- մկնիկ*

**8. Taguear** to tag (as in coding or technical language, not as in playing tag)

իսպաներեն համարժեքն է *etiquetear- պիտակ փակցնել, պիտակավորել*

**9. Mandar un mail** To send an email

իսպաներեն համարժեքն է *mandar un correo, mandar un correoelectrnico - էլեկտրոնային փոստ ուղղարկել*

**10. Macharormachear** to match

իսպաներեն համարժեքն է *combiner- զուգակցել, համակցել, նախագծել*

**12. Janguear** to hang out

իսպաներեն համարժեքն է *pasar el rato – ժամանակ անցկացնել, զվարճանալ*

(<http://www.speakinglatino.com/funny-spanglish-words/>)

Կարևոր է, որ ուսանողները իրենք գտնեն համապատասխան տեղեկատվություն, բառեր արտահայտություններ և բերեն քննարկման: Օրինակ՝

A Selection of Spanglish: Սպանգլիշ օրինակներ

aergbica – dynamic female –ճկուն /եռանդուն, շարժուն, ակտիվ/ կին

averaje – average – միջինի, միջինմեծություն, 2. միջին, սովորական boila – heating appliance, boiler – ջեռուցման հարմարանք; (շոգե)կաթսա, եռուցիչ

carpeta – carpet – գորգ chopin – 1. shopping center mall; 2. going shopping – առևտրի կենտրոն 2. առևտրի գնալը

deiof – day off – հանգստյան օր frizer – refrigerator – սառնարան

grocear – to acquire groceries – ձեռք բերել, ստանալ նպարեղեն

jonrgn – home run

lonche – 1. midday meal. 2. food served to guests at an event – 1. կեսօրյա ուտելիք 2. ըրևէ իրադարձության ժամանակ մատուցած ուտելիք

marqueta – supermarket. – սուպերմարկետ pari – a party. – խնջույք

ruki – novice – նորեկ, սկսնակ Computer terms: համակարգչային տերմիններ

chatear – to chat – զրուցել, խոսել cliquiar – to click, սեղմել, կլիկ անել

deletear – to delete – ջնջել, հանել (տառը, բառը և այլն)

dragear – to drag the mouse – քաշել, ձգել մկնիկը

el maus – the mouse – մկնիկ forwardear – to forward – առաջ, դեպի առաջ

linquiar – to link – միացնել, կապել, կապակցել

printear – to print – տպել <http://www.antimoon.com/forum/2005/6654.htm>

“Carpeta” բառը ստանդարտ իսպաներենում նշանակում է թղթապանակ, իսկ սպանգլիշում նշանակում է «carpet» սենյակի գորգ:

“clutch” բառը համարվում է սպանգլիշ, որը մեքսիկական, իսպանական և լատինոամերիկյան իսպաներենում օգտագործվում է որպես ավտոմատ փոխանցման տուփ:

embraque ստանդարտ իսպանական բառը որպես շղթայակցում:

Սպանգլիշն օգտագործվում է գովազդում, ամսագրերում, ռադիոյում, փողոցում, հեռուստատեսությունում, թերթերում, սուպերմարկետներում:

Haz clic aquil. Հանդիպում է վեբ կայքերում

*Llamenos para deliver. Հանդիպում է*  
Պերույում գովազդային վահանակների վրա  
*Se venden bloques.* Գվատեմալայում  
պաստառներին:

Սպենզիլիզը հաղորդակցության միջոց է հատկապես ԱՄՆ-ում, որտեղ տեղի է ունենում փախստականների մեծ ներհոսք, ներգաղթ Լատինական Ամերիկայից, Մեքսիկայից, հատկապես Կալիֆորնիա նահանգ, որտեղ քաղաքների մեծ մասն ունեն իսպանական անվանումներ՝ «Սան Դիեգո», «Սան Մարինո», «Սակրամենտո», «Սան Բերնանդինո», «Լոս Անջելես», «Սան Մարկոս»: Նույնիսկ փողոցներն ունեն իսպանական անուններ՝ «Կամինո դել Ռիո», «Կառտե Էնկանտո»: Նորաձև են դարձել «patio»-ով /ներքին բակերով/ տները:

Կան անվանումներ, որոնք ձևավորվել են եվրոպական լեզուների հիմքի վրա: Օրինակ՝ *California [kalifo:niə]* – Կալիֆորնիա

Սպենզիլիզի բովանդակային առանձնահատկությունները բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել անգլերենում տարածված իսպաներեն փոխառությունները: ԱՄՆ-ի հարավարևմտյան տեղանունների մեծ մասը կազմում են իսպաներենից փոխառությունները: Ներկա ժամանակում Միացյալ Նահանգներում բացակայում է իսպանական անվանումների միօրինակ, ստանդարտացված արտասանությունը: “Los Angeles Times” թերթը երկար տարիների ընթացքում հայտարարություններ էր հրատարակում այն մասին, որ քաղաքի անվանումը պետք է արտասանել հետևյալ կերպ՝ [los’anheles]: Սակայն այդ արտասանությունը չընդունվեց և այժմ գործում են հետևյալ տարբերակները՝ [los’andzili:z], [los’anjili:z]:

Իսպանական անվանումների անգլիականացումը մեծապես զգալի է Կոլորադոյում, բայց գրեթե բացակայում է Նյու- Մեքսիկայում:

Այսպես օրինակ *La Mesa [la:’meisə]* – իսպանական ծագման տեղանուն է: Այն շատ տարածված է ԱՄՆ-ի հարավ-արևմտյան շրջաններում: Կալիֆորնիայում և Նյու-Մեքսիկոյում պահպանվում է մեքսիկական արտասանությունը “may” [mei], բայց Թեքսասում հնչում է “mee” [mi:] և պաշտոնապես հաստատված է գրելաձևը՝ “Lamesa”:

Տեղանունների արտասանությունը առանձնանում է յուրահատուկ հաստատունությամբ:

Իսպանական փոխառությունների օգտագործումն առկա է ոչ միայն տեղանունների մեջ, այլև այլ ոլորտներում: Այսպես օրինակ՝ Մեքսիկայի ազդեցությունը վառ կերպով նկատվում է ամերիկյան անգլերենում: Մեքսիկայից գաղթած մարդիկ մեծ ազդեցություն են ունեցել ամերիկյան կենսակերպի վրա տարբեր ուղղություններով. Շատ կարևոր ներդրում ունի մեքսիկական հարուստ խոհանոցը:

Սպենզիլիզի տիպական օրինակներ կարելի է հանդիպել մեքսիկական սննդի անվանումներում, որոնք դարձել են շատ տարածված Միացյալ Նահանգներում: Այն պատրաստվում է տարբեր վայրերում, սկսած արագ սննդի ցանցերից, ինչպիսին «Tako Bell»-ն է, մինչև նրբաճաշակ ռեստորանները, որոնք դարձել են ամերիկյան մշակույթի մի մասը, որպես տարատեսակ բաղադրիչների և ճաշատեսակների անվանում:

Իսպաներենից անգլերեն բառի փոխառությունը հայտնվել է մեքսիկաամերիկյան բաղադրատոմսերում: Իսպաներեն որոշ բառեր, որոնք հարմարեցվել են անգլերեն լեզվում շատ տարիներ առաջ, հիմա դարձել են ստանդարտ, օրինակ այնպիսի բառեր, ինչպիսիք են՝

*tuna (atOn- ձուկ), jerk or jerky* – բարակ

կտրատած տավարի միս,

*(charqui), paupano (pampano)*- աղի ջրում

բնակվող ձուկ  
*tomato (tomate), potato (patata), banana;*  
*cacao, cocoa, chocolate* – կակաո, շոկոլադ

բառերը նույնպես եկել են իսպաներենից, բայց շոկոլադ բառը ծագել է ացստեկների լեզվից:  
Համեմունքները հանդիսանում են մեքսիկական խոհանոցի հիմնական բաղադրիչները: Հետևյալ բաղադրիչների անվանումները փոխառված են իսպաներենից:

*achiote seeds*- բոդկի չորացված սերմեր, որոնք օգտագործվում են որպես համեմունք:

*epazote*-խոտ, որը լայնորեն օգտագործվում է լոբազգիներով պատրաստված ճաշատեսակներում (ԱՄՆ-ում նաև կոչվում է «wormseed»)

Մեքսիկական ըմպելիքներից հայտնի են *mescal, tequila, margarita*-ն:

Իսպաներենի երկրագիտական դասընթացում կարևորվում են նաև այն փոխառված բառերը, որոնք իսպաներենում և անգլերենում համընկնում են իրենց ձևով և իմաստով: Ինչպես հայտնի է անգլերենը ոչ միայն եղել է հաղթող կամ գերակա լեզու: Այն նույնպես կրել է գաղութներում բնակվող ցեղերի և էթնիկ խմբերի ազդեցությունը: Սկսած միջին դարերից իսպաներենը փոփոխության է ենթարկվել է ավելի դանդաղ, քան անգլերենը: Խոսելով փոխառության ձևերի, միջոցների մասին՝ անհրաժեշտ է նշել, որ իսպանական փոխառություններն անգլերեն լեզու են ներթափանցել հիմնականում բանավոր և գրավոր հաղորդակցության միջոցով:

Ինչպես հայտնի է, ցանկացած լեզվի մեջ ամեն ինչ ենթարկվում է փոփոխությունների բառային (բառապաշարային), հնչույթային և ձևային փոխառությունների հաշվին: Անհրաժեշտ է առանձնացնել նաև իսպանական փոխառությունները հնչունային և իմաստային յուրացման մակարդակում, մասնավորապես՝ Հարավային Իսպանիայում և Լատինական Ամերիկայում:

Կարևոր բացահայտում է այն, որ անգլերենը և Իսպանիայում գործածվող իսպաներենն ունեն հնչունային և իմաստային նմանություններ, այն դեպքում, երբ Լատինական Ամերիկայում գործածվող իսպաներենը և անգլերենը ուսուցողական նպատակներով կիրառելիս առաջ են գալիս բազում դժվարություններ: Լատինական Ամերիկայում նշված լեզուների փոխազդեցությունը դրսևորվում է թե՛ համադասական, թե՛ ստորադասական երկլեզվությամբ: Այդ շրջանի բնակիչների խոսակցական լեզվում հանդիպում են մեծ քանակությամբ անգլերեն և իսպաներեն արտահայտչամիջոցներ:

Արդյունավետ է իսպաներենի գործնական ժամերին ստեղծել անգլերեն բառերին փոխարինող իսպաներեն բառեր, չվախենալ նմանատիպ բառերի ստեղծումից: Այդ դեպքում, օրինակ, reliability բառին փոխարինելու կգան իսպաներեն fiabilidad կամ confiabilidad բառերը, իսկ self-service բառի փոխարեն կարող ենք օգտագործել auto-servicio բառը: Ուսանողները մասնակցելով յուրահատուկ բառաստեղծման գործընթացին, ստիպված են լինում հարմարեցնել անգլերեն բառերն իսպաներենի հնչունային, առոգանական և ձևաբանական նորմե-

րին, ինչպես դա տեղի է ունեցել անգլերենի առնմանվող փոխառությունների հետ (astronauta, parámetro, reactor, síndrome, drenaje, chequear, chutar, noquear, sprintar և այլն):

Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման տեսանկյունից կարևոր է այն, որ Լատինական շեշտը դնում է անգլերեն փոխառությունների ձևաբանական հայեցակերպի վրա, հետին պլան մղելով բառակազմության հնչունային հիմքերի ուսումնասիրության կարևորությունը: Օրինակ՝ ciclostil, cinemascopio, magnetofón, suspense, automación, permitividad, gasoil բառերը նրա կարծիքով պետք է համապատասխանեցվեն իսպաներենի ձևաբանական կանոններին՝ ciclostilo, cinemascopio, magnetófono, suspensión, automatización, permisividad, gasóleo (Lapesa 1963, 1966): Սույն հետազոտության համատեքստում կարևորվում է փոխառվող, փոխառնչվող բառերի ուսուցման մշակութաբանական հայեցակերպը:

Թոմ Բուկլետը կարծում է, որ անգլերենի ազդեցությունը իսպաներենի վրա հատկապես նկատելի է մամուլի լեզվում: Հետաքրքիր է նրա նկատառումները երկակիության վերաբերյալ՝ «անհրաժեշտ փոխառություն» (necessary loans) և «բարեհունչ տարբերակ» (elegant variation) (Bookless: 1966): Բայց այս հակադրումը դժվար է կիրառել կոնկրետ բառերի նկատմամբ, քանի որ այն տեսական պլանում դառնում է չկայացած: Այս երկակիությունը չունի բաժանման հստակ հիմք. «անհրաժեշտ փոխառություն»-ը հիմնված է «պարտադիր և ոչ պարտադիր» հիմքի վրա, իսկ «բարեհունչ տարբերակ»-ը ուղղագրական չափանիշի վրա: Օրինակ՝ cowboy/vaquero/, film/película/, hall/vestíbulo-entrada-recibimiento/, stand/pabellón/, chequeo/reconocimiento médico/ բառերը նա վերագրում է «բարեհունչ տարբերակ» բաժնին, իսկ այնպիսի բառեր, ինչպիսիք են shock/choque/, hot dog/perro caliente/, mitin/reunión política/, boyscout/explorador/, short(s)/pantalon corto/, trailer/avance/ վերագրում է «անհրաժեշտ փոխառություններ» բաժնին:

Ինչպես արդեն նշվել է, անգլերեն լեզվից արված փոխառությունները ուսուցողական նպատակներով պատահական չեն կարող ընտրվել: Անգլերենի զանգվածային տարածումը ողջ աշխարհում, արվեստի, գիտության, տեխնիկայի, սպորտի միջազգայնացումը, տարաբնույթ միջազգային շփումների բուռն զարգա-

ցումը նպաստում են իսպանո-անգլիական կապերի ամրապնդմանը և ընդլայնմանը, և հետևաբար հարստացվում է իսպաներենն անգլերենից արված փոխառություններով: Իսպաներենի երկրագիտության դասընթացներ նախագծելիս, անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել այդ հանգամանքը:

#### **Եզրակացություն**

Լեզվական համակարգերի փոխազդեցության գործընթացներն շոշափելի ազդեցություն են ունենում նրանց վրա: Ամերիկայում գործածվող իսպաներենի տարածաշրջանային յուրահատկությունների ուսումնասիրությունը թույլ են տալիս բացահայտել սպենգլեշի հնչյունային, բառապաշարային և ձևային առանձնահատկությունները և կիրառել դրանք ուսուցողական նպատակներով:

Սպենգլեշը մեծ ուսուցողական ներուժ ունի, քանի որ այն ներկայացնում է որոշակի մարդկանց խմբեր, նրանց հոգեբանությունը, վարքը, բարքերը և այլն: Նրա ուսումնասիրությամբ հնարավոր է ստանալ ճիշտ և ամբողջական տեղեկատվություն թե՛ մշակույթի, թե՛ լեզվի մակարդակներում:

Արդյունավետ է իսպաներենի և անգլերենի գործնական ժամերին կիրառել տարբեր փոխներգործուն մեթոդներ, մոդելավորել տար-

բեր իրական խոսքային իրադրություններ, երբեմն ստեղծել անգլերեն բառերին փոխարինող իսպաներեն բառեր, որոնք ներկայացնում են սպենգլեշ բառապաշարի առանձնահատկությունները:

Սույն հետազոտության համատեքստում կարևորվում է փոխառվող, փոխառնչվող բառերի ուսուցման մշակույթաբանական հայեցակերպը:

#### **Գրականություն**

1. Потебня А. Полное собрание трудов. – М.: Лабиринт. – 1999. – 300с.
2. Baugh A. A. And Cable Th. A History of the English Language. –5 Edition NewYork, 2001. – 447 p.
3. Bookless T. The language of the Spanish Press, 1965-1966, tesis inédita para el título de M.Phil.por la Universidad de Leeds, 1966.
4. Friedman R. Language Purists Dismayed By Spanglish// Star-Tribune Newspaper. -2001: Retrieved from <http://www.puertoricoherald.org/issues/2001/vol5n06/Spanglish-en.html>
5. Johnson A. That curious mixture of English and Spanish is here to stay”// Broadsheet Journal. - #46/1. – 1999. –pp. 1-4.
6. Lapesa R. Historia de la lengua española, sexta edición, Madrid, Escelicer, 1965, 424 págs.
7. Lorenzo E. El anglicismo en el español de hoy //Arbor, 32, 1955.
8. <http://www.speakinglatino.com/funny-spanglish-words/>